ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 86- Ա 20 մայիսի 2016 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 815-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ստեղծելու մասին» N43-Ա որոշումը՝

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի նշանակման պատճառով ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը օրենքով սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Աղեկյան Ալբերտ	- Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ. հանձնաժողովի նախագահ
Սարգսյան Նելսոն	- Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
Ղազարյան Նորիկ	-Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
Խաչատրյան Վիգեն	- Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ
Պողոսյան Անուշ	- հանձնող
Էլիզբարյան Գայանե	- ընդունող

2. Հանձնաժողովին՝ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը սեղմ ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ